ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 217 -Ա

« 19 » ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 111-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1752-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի հունիսի 7-ի թիվ 111-Ա որոշման 4-րդ կետով հաստատված կանոնադրության մեջ «Վայոց ձորի մարզային հիվանդանոց» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Վայոց ձորի բժշկական կենտրոն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:
2. Հաստատել «Վայոց ձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության փոփոխությունը:
3. Ընկերության գործադիր մարմնի ժամանակավոր պաշտոնակատար Խ. Նազարյանին՝ երկշաբաթյա ժամկետում օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կատարված փոփոխության պետական գրանցման համար:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությանը:

Qualified Electronic Signature

Certificate owner: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ստորագրված